



**Տարեկան հաշվետվություն**  
*Annual report*

**2016**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր գործադիր սնօրենի խոսք

04

Հիմնական ցուցանիշներ

05

Անհատներին

06

Գործարարներին

09

Ֆերմերներին

11

«ԱԳԲԱ Լիզինգ» ՓԲԸ

12

Անփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

14

# ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ

## Հարգելի՛ հաճախորդներ, բաժնետերեր և գործընկերներ,

2016 թվականը մեզ համար հոբելյանական էր: Շուրջ 20 տարի Բանկը վճռական դեր է ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության բոլոր ոլորտների զարգացման գործում: Մեր աշխատակիցների պրոֆեսիոնալ թիմն այսօր էլ ջանքեր չի խնայում՝ իր փորձն ու նորարարական ոգին ներդնելով հանուն ընդհանուր գաղափարի, ինչի արդյունքում մենք շարունակում ենք հանդիսանալ Հայաստանի համակարգաստեղծ բանկերից մեկը՝ բազմաթիվ ոլորտներում հանդես գալով առաջատարի դերում:

Հետևություններ անելով 20-ամյա գործունեության ընթացքում գրանցած հաջողություններից և բաց թողնված հնարավորություններից՝ մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ, չնայած մեր առջև ծառայող բազմաթիվ դժվարությունների, արձանագրում ենք Բանկին մշտապես բնորոշ բարձր և կայուն ֆինանսական ցուցանիշներ:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ. նույնպես, մենք կարողացանք կյանքի կոչել բազմաթիվ կարևոր ծրագրեր, ներդնել նոր՝ թիրախավորված բանկային ծառայություններ և ավարտին հասցնել մի շարք մտահղացումներ: Մասնավորապես, ստեղծվեց Ստեփան Գիշյանի անունը կրող բարեգործական հիմնադրամը, որի հիմնական առաքելությունն է ֆինանսավորել և նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային և առողջապահական ոլորտների բարելավմանն ու կատարելագործմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Մեզ հաջողվեց շատ բան փոխել հասարակության գիտակցության մեջ՝ ձևավորելով Հայաստանում հաջողության հասնելու գաղափարի վերաբերյալ նոր՝ լավատեսական մոտեցում:

Տարվա ընթացքում կարողացանք իրագործել նաև բազմաթիվ սոցիալական բնույթի ծրագրեր, ինչը մեզ համար մեծ պատիվ է, և հույս ունենք հաջորդ տարիներին էլ ավելի ակտիվ մասնակցություն ունենալ սոցիալական խնդիրների լուծման գործում:

Մեր հաճախորդների վստահությունն ու խստապահանջությունը պարտավորեցնում և ոգևորում են մեզ՝ լինել առավել հետևողական և պրոֆեսիոնալ՝ շարունակելով հանդես գալ որպես հայաստանյան լավագույն բանկերից մեկը:

Գլխավոր գործադիր տնօրեն՝  
Հակոբ Անդրեասյան



# ՆԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	2015	2016		
<b>Ընդհանուր ցուցանիշներ (մլն ՀՀ դրամ)</b>				
Ընդհանուր ակտիվներ	272,853	283,272	4%	↑
Ընդհանուր պարտավորություններ	219,141	226,677	3%	↑
Սեփական կապիտալ	53,712	56,595	5%	↑
Շահույթ մինչև հարկում	358	2,777	676%	↑
Վարկային պորտֆել	168,359	165,222	-2%	↓
Ավանդային պորտֆել	107,606	122,572	14%	↑
<b>Ենթակառուցվածք</b>				
Մասնաճյուղեր (ներառյալ Կենտրոնական գրասենյակը)	57	59	4%	↑
Բանկոմատներ	203	170	-16%	↓
Կանխիկի ընդունման տերմինալներ	89	100	12%	↑
POS-տերմինալներ	1,286	1,457	13%	↑
<b>Այլ տվյալներ</b>				
Աշխատակիցներ	1,230	1,287	5%	↑
Հաճախորդներ	292,799	327,947	12%	↑
<b>«ԱԳԱԼ Լիզինգ» ՓԲԸ ցուցանիշներ (մլն ՀՀ դրամ)</b>				
Ընդհանուր ակտիվներ	12,659	14,692	16%	↑
Ընդհանուր պարտավորություններ	9,489	11,222	18%	↑
Սեփական կապիտալ	3,170	3,470	9%	↑
Շահույթ մինչև հարկում	73	400	448%	↑
Լիզինգային պորտֆել	9,863	9,909	0.5%	↑

Սույն հաշվետվության մեջ ներկայացված ֆինանսական ցուցանիշների աղբյուր են հանդիսանում 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

# ԱՆՎՏՆԵՐԻՆ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016թ. ընթացքում Բանկը հետևողական է եղել իր խստապահանջ հաճախորդների սպառողական պահանջմունքների բավարարման հարցում: Հաճախորդամետ քաղաքականության արդյունքում տարբեր թիրախային խմբերի հաճախորդների համար 2016թ. ներդրվեցին նոր ծառայություններ և պրոդուկտներ:

2016թ. վերջի դրությամբ Բանկում սպասարկվող անհատների թիվը կազմել է 317,739

**Չայաստանյան բուհերի ուսանողների համար ստեղծվեց ուսման վարձը վճարելու և մեկ հնարավորություն՝ պետական աջակցությամբ վարկավորում, ինչը թույլ է տալիս ուսումնառության տարիների ընթացքում վճարել միայն տոկոսագումարները, իսկ վարկի մայր գումարը մարել ուսումնական տարիներից հետո:**

**Չայաստանի ուժային կառույցների՝ մասնավորապես ՀՀ ՊՆ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ոստիկանության աշխատակիցներին առաջարկվեց նոր վարկատեսակ, որի շրջանակներում նրանք հնարավորություն ունեն ձեռք բերել կենցաղային տեխնիկա արտոնյալ պայմաններով:**

**«Ամեն բան լավ է լինելու» սոցիալական արշավի շրջանակներում ժամկետային գինծառայողների և նրանց ընտանիքների վարկային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով իրականացվեց ժամանակավոր ակցիա, որի ընթացքում իջեցվեցին թիրախային խմբի ընթացիկ վարկերի տոկոսադրույքները, իսկ նոր վարկերը տրամադրվեցին արտոնյալ տոկոսադրույքով:**

**Բարելավվեցին «Ապահիկ տեղում» ծառայության պայմանները, որի արդյունքում ապահովվեց վարկային հայտերի ուսումնասիրության արագությունն ու որակը, վերանայվեցին և պարզեցվեցին վարկի տրամադրման պահանջներն ու մեխանիզմները: Տարեվերջին «Ապահիկ տեղում» ծառայությունից օգտվող հաճախորդների համար իրականացվեց «Այն, ինչ գնել եք, հենց դա էլ կշահեք» ակցիան, որի արդյունքում թվով 20 հաճախորդներ ճանաչվեցին հաղթող և ազատվեցին ապահիկ գնման հետագա վճարման պարտավորությունից:**

**Իրականացվեց Բանկի կողմից բացառիկ հիմունքներով թողարկվող American Express Gold և American Express Blue վճարային քարտերի անցումը չիպային և առանց կոնտակտի տեխնոլոգիայի վրա հիմնված տարբերակի, ինչի շնորհիվ քարտերով գործարքների կատարումը դարձավ առավել անվտանգ և մեկ ակնթարթում: Հաշվի առնելով օգտատերերի հարմարավետության պահանջմունքները՝ գործարկվեց նաև American Express քարտերի նոր ինտերնետային կայքը:**



**Վճարային քարտերի սպասարկման ոլորտի զարգացման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում համագործակցության սկիզբ դրվեց 2 նոր միջազգային վճարային համակարգերի՝ JCB և China Union Pay-ի հետ: Արդյունքում՝ Բանկը շուտով հնարավորություն կունենա Չայաստանում իրականացնել նաև այս համակարգերի կողմից թողարկվող քարտերի սպասարկում բանկոմատներում, POS-տերմինալների միջոցով և վիրտուալ միջավայրում:**

**Սկսվեց չաշխատող մայրերի և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների վճարման ծառայությունների տրամադրումը:**


**Ընդլայնվեցին ապահովագրական ընկերությունների հետ համագործակցության շրջանակները, հաստատվեցին նոր գործարար հարաբերություններ, ինչպես նաև բարելավվեցին ապահովագրական ծառայությունների պայմանները:**

**Հաճախորդների սպասարկումը պարզեցնելու և բարեփոխելու նպատակով ներդրվեց սպառողական և ուսման վարկերի առցանց հայտերի ընդունման համակարգ, ինչպես նաև «Ինտեխնոսագանգի պատվեր» ծառայությունը:**

2016թ. վերջի դրությամբ անհատների կողմից Բանկում ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է **13%-ով՝** հասնելով շուրջ **89 մլրդ ՀՀ դրամի (183 մլն ԱՄՆ դոլար):** Անհատների ժամկետային ավանդների ծավալը տարեվերջին կազմել է շուրջ **72 մլրդ ՀՀ դրամ (148 մլն ԱՄՆ դոլար)՝** նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ **12%-ով,** իսկ ցպահանջ ավանդների աճը կազմել է **20%** և գերազանցել է **17 մլրդ ՀՀ դրամ (35 մլն ԱՄՆ դոլար):** Ընդ որում՝ ժամկետային և ցպահանջ ավանդների մասնաբաժինները Բանկի անհատների ավանդային պորտֆելի կառուցվածքում կազմել են համապատասխանաբար **81%** և **19%:**




2016թ. տարեվերջին մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելում Բանկի կողմից տրամադրված վարկերի ծավալը կազմել է **շուրջ 58 մլրդ ՀՀ դրամ (119 մլն ԱՄՆ դոլար),** ինչը մոտ **5%-ով** ավել է նախորդ տարվա ցուցանիշից և կազմում է Բանկի համախառն վարկային պորտֆելի մոտ **31%-ը:** Մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի կառուցվածքում 2015թ. վերջի համեմատ աճ է գրանցվել սպառողական վարկերի, ոսկու գրավով ապահովված վարկերի և հիփոթեքային վարկերի ծավալներում՝ համապատասխանաբար **12%, 9%** և **12%:** Այսպիսով՝ 2016թ. սպառողական վարկերի ծավալը կազմել է մոտ **33 մլրդ ՀՀ դրամ (68 մլն ԱՄՆ դոլար),** ինչը մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի գերակշռող մասն է՝ **57%-ը,** ոսկու գրավով ապահովված վարկերի ծավալը կազմել է մոտ **6 մլրդ ՀՀ դրամ (12 մլն ԱՄՆ դոլար)՝** զբաղեցնելով պորտֆելի **10%-ը,** իսկ հիփոթեքային վարկերի ծավալը հասել է մոտ **8 մլրդ ՀՀ դրամի (16 մլն ԱՄՆ դոլար)** և կազմել է պորտֆելի **14%-ը:** Վարկային գծերի ծավալը հաշվետու ժամանակահատվածում նվազել է **17%-ով՝** կազմելով Բանկի մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի **19%-ը** կամ **11 մլրդ ՀՀ դրամ (23 մլն ԱՄՆ դոլար):**



2016թ. տարեվերջին աճ է գրանցվել ինչպես քարտային բիզնեսի քանակական ցուցանիշների, այնպես էլ քարտերով կատարված գործառնությունների ծավալների մեջ: Հաճախորդներին տրամադրված քարտերի քանակը հաշվետու տարվա ընթացքում աճել է մոտ **7%-ով** և հասել **206,252-ի:** Ընդ որում՝ American Express քարտերի քանակը հաշվետու տարվա ընթացքում աճել է **5%-ով,** իսկ Visa քարտերի քանակը՝ **10%-ով:**

## Վճարային քարտերի քանակի դինամիկան ըստ տարիների




● Վճարային քարտերի քանակ

ՀՀ բանկային ոլորտում Բանկի քարտերի քանակի տեսակարար կշիռը կազմել է 13%՝ նախորդ տարվա 11%-ի փոխարեն

Մեր Բանկի քարտապաններն ապահովում են ՀՀ բանկային համակարգի քարտային գործառնությունների ողջ ծավալի 13%-ը, ինչը կազմում է շուրջ 179 մլրդ ՀՀ դրամ (371 մլն ԱՄՆ դոլար) և գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը ավելի քան 3%-ով: Բանկի քարտային գործառնություններում նախորդ տարվա համեմատ զգալի աճ է գրանցվել հատկապես վիրտուալ միջավայրում կատարված գործարքների ծավալի մեջ՝ ավելի քան 39% և արտասահմանյան գործարքների ծավալի մեջ՝ 16%: Բանկի կողմից թողարկված Visa և MasterCard վճարային համակարգերի քարտերով 2016թ. ապահովվել է գործարքների ծավալի աճ համապատասխանաբար 20% և 34%-ով:

### Քարտային գործառնությունների դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



● Քարտային գործառնությունների ծավալ


2016թ. անհատների կողմից արագ դրամական փոխանցման համակարգերով ստացված փոխան-

ցումների գծով Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ավելացել է 0.3 տոկոսային կետով և գերազանցել 15%-ը:

2016թ. տարեվերջի դրությամբ Բանկն անդամակցել է ՀՀ-ում գործող 13 արագ փոխանցման միջազգային համակարգերից 8-ին՝ ANELIK, MoneyGram, RIA Money Transfer, Unistream, IntelExpress, Xpress Money, Converse Transfer, Sigue Money Transfer

Հաշվետու ժամանակահատվածում 24%-ով ավելացել է Բանկի միջոցով արագ դրամական փոխանցման համակարգերով ուղարկված փոխանցումների քանակը՝ հասնելով 26,890-ի, իսկ ստացված փոխանցումների քանակը նվազել է 1%-ով՝ կազմելով 499,529: Բանկի կողմից ստացված փոխանցումների 36%-ը հաճախորդներին վճարվել է անկանխիկ՝ ACBA Transfer քարտերի միջոցով՝ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը զրեթե 6%-ով:

### Ստացված և ուղարկված փոխանցումների քանակի դինամիկան ըստ տարիների



● Ստացված փոխանցումների քանակ  
● Ուղարկված փոխանցումների քանակ

## ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

2016թ. ընթացքում ՓՄՁ և կորպորատիվ բիզնեսի աջակցման ուղղված փոփոխությունների և բարելավումների արդյունքում Բանկի բիզնես-հաճախորդների թիվն ավելացավ շուրջ 12%-ով:



Փոքր և միջին ձեռնարկությունների ծախսերի նվազեցման նպատակով KfW բանկի հետ սկսվեց նոր համագործակցություն, որը հնարավորություն է ստեղծում իրականացնել Էներգաարդյունավետ ներդրումներ և վարել «կանաչ» գործունեություն:

«Կանաչը մեր գույնն է» քաղաքականության շրջանակներում 42%-ով ավելացել է ACBA Online ծառայությունից օգտվող բիզնես հաճախորդների քանակը



Գևորդ-վաճառող հարաբերություններում հնարավոր ֆինանսական ռիսկերից խուսափելու նպատակով ներդրվեց էսբրոու հաշիվներից օգտվելու հնարավորությունը, որը թույլ է տալիս որպես երաշխիք հաշվին սառեցնել գործարքի իրականացման գումարը:



ՀՀ արտահանողների հոգսը էապես թեթևացնելու նպատակով Բանկի և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության միջև սկսվեց համագործակցություն, որն իրենից ներկայացնում է ՀՀ արտահանողների կարճաժամկետ ֆինանսավորման ծրագիր պարզեցված ընթացակարգով և առավել արտոնյալ պայմաններով:



Վերականգնողական Էներգետիկայի և Էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ սկսվեց համայնքների ֆինանսավորման լայնամասշտաբ ծրագիրը, որի շրջանակներում համայնքներում իրականացվելու են Էներգախնայող ծրագրեր:



Ոչ ֆինանսական ծառայությունների շրջանակներում իրականացվող բիզնես դասընթացների դրական արձագանքների արդյունքում ստեղծվեց sme.acba.am բիզնես հարթակը, որի հիմնական առաքելությունն է աջակցել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը:

Բիզնեսի օպտիմալ կառավարմանն ուղղված մի շարք դասընթացներին 2016թ. ընթացքում մասնակցել են 199 փոքր և միջին ձեռնարկություններ




Կարևորելով գործարար ոլորտի ազատ ֆինանսական միջոցների արդյունավետ տնօրինման անհրաժեշտությունն ու պահանջարկը՝ մենք մշակեցինք «Բիզնես ավանդ» պրոդուկտի նախագիծը, որը ստեղծված է բիզնեսի պահանջմունքները հնարավորինս ճկուն և լիարժեք բավարարելու համար:




Բարձր գնահատելով կին գործարարների դերն ու պոտենցիալը Հայաստանի տնտեսության զարգացման գործում՝ վերջիններիս գործունեությանը նպաստելու աջակցման նպատակով ձեռնարկվեց «Կանաչ բիզնեսում» նախագիծը, որը կյանքի կկոչվի 2017թ.:

Գործարար ոլորտի հետ գրագետ և փոխշահավետ համագործակցության արդյունքում 2016թ. տարեվերջին ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալը կազմեց շուրջ 63 մլրդ ՀՀ դրամ (129 մլն ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը ավելի քան 18%-ով: Ընդ որում՝ կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերը կազմեցին մոտ 34 մլրդ ՀՀ դրամ (71 մլն ԱՄՆ դոլար)՝ նվազելով շուրջ 7%-ով, իսկ ՓՄՁ հաճախորդներին տրամադրված վարկերը՝ մոտ 28 մլրդ ՀՀ դրամ (58 մլն ԱՄՆ դոլար)՝ ապահովվելով շուրջ 14% աճ: ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների վարկերի մասնաբաժինը Բանկի իրավաբանական անձանց վարկային պորտֆելի կառուցվածքում կազմեց համապատասխանաբար 45% և 55%:

### 2016թ. ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների վարկային դորսֆելի կառուցվածքը




## ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների վարկավորման դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



● ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների վարկերի ծավալ

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է նաև ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների ավանդային պորտֆելի աճի տենդենցը, ինչը վկայում է մեր հաճախորդների վստահության մասին: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է շուրջ **16%-ով**՝ հասնելով շուրջ **34 մլրդ ՀՀ դրամի (70 մլն ԱՄՆ դոլար)**:

## ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների ավանդային դորսֆելի դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



● Ցպահանջ ավանդների ծավալ  
● Ժամկետային ավանդների ծավալ  
● Ընդամենը

Ընդ որում՝ գործարար ոլորտի ներկայացուցիչների ցպահանջ ավանդների ծավալը 2016թ. ընթացքում աճել է մոտ **2%-ով**՝ գերազանցելով **16 մլրդ ՀՀ դրամը (35 մլն ԱՄՆ դոլար)**: Իսկ ժամկետային ավանդների ծավալը տարեվերջին կազմել է ավելի քան **17 մլրդ ՀՀ դրամ (35 մլն ԱՄՆ դոլար)**՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ **33%-ով**: Այսպիսով՝ ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների ավանդային պորտֆելում և՛ ցպահանջ, և՛ ժամկետային ավանդների մասնաբաժինները կազմում են **50%**:

## 2016թ. ՓՄՁ և կորպորատիվ հաճախորդների ավանդային դորսֆելի կառուցվածքը



**50 %**  
Ցպահանջ ավանդներ

**50 %**  
Ժամկետային ավանդներ

## ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

Բանկի առաջնային նպատակներից մեկն է Հայաստանի գյուղացիական տնտեսություններին բարձրակարգ, մատչելի և բազմապրոֆիլ ֆինանսական ծառայություններով ապահովումը: Իր ողջ գործունեության ընթացքում Բանկը մշտապես ուշադրության կենտրոնում է պահել գյուղացիական տնտեսությունների աճող պահանջմունքները և գյուղական համայնքների զարգացման հիմնախնդիրները:

2016թ. դրությամբ Բանկում սպասարկվում է գյուղատնտեսությամբ զբաղվող **92,190 հաճախորդ**



Առաջնորդվելով սոցիալապես պատասխանատու քիզնեսի սկզբունքներով՝ Բանկը NABU Գերմանիայի բնության պահպանության միության հետ շարունակում է աջակցել Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը: Բանկի գործընկեր-ֆերմերները մասնակցել են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում անցկացվող «ԲիոՖախ» օրգանական արտադրանքի ցուցահանդեսին, որի ընթացքում նրանք ձեռք են բերել իրենց կողմից արտադրվող և Բանկի աջակցությամբ սերտիֆիկացված օրգանական արտադրանքի արտահանման պայմանավորվածություն:



Կարևորելով գյուղատնտեսության վրա բնակլիմայական աղետների ուղղակի ազդեցության նվազեցումը՝ Բանկը, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» Հիմնադրամը և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը համաձայնել են համատեղել ջանքերը գյուղական համայնքներում կարկտապաշտպան ցանցերի կիրառման մշակույթի ձևավորման և զարգացման նպատակով: Ծրագրի բարեհաջող իրագործումը հնարավորություն կտա էականորեն նվազեցնել բնակլիմայական աղետների ազդեցությամբ պայմանավորված ռիսկերն այգեգործությամբ և բուսաբուծությամբ զբաղվող հաճախորդների շրջանում, ինչը նաև թույլ կտա նվազեցնել այդ ոլորտների ֆինանսավորման ռիսկը:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձնում ֆինանսական ծառայությունները գյուղացիներին առավել մատչելի և հարմարավետ պայմաններով մատուցելու հարցին: Այս է պատճառը, որ Բանկի մասնաճյուղերից 42-ը և բանկոմատների մոտ 50%-ը տեղադրված են մարզերում:


Հատուկ գյուղացիական տնտեսությունների համար թողարկված ArCa Farmer քարտերի քանակը տարեվերջի դրությամբ կազմել է **49,135 քարտ**

Բանկը մշտապես միջոցներ է ձեռնարկում գյուղատնտեսական վարկերի տրամադրման պայմանների բարելավման և պարզեցման ուղղությամբ: Բանկի՝ գյուղատնտեսական վարկերի տրամադրման քաղաքականության կարևոր առանձնահատկություններից են նաև վարկերի մարման գրաֆիկի և վերլուծության մեխանիզմների ճկունությունը և համապատասխանությունը հանրապետության գյուղացիական տնտեսությունների պահանջներին: Գյուղատնտեսական վարկերի գերակշիռ մասը՝ **81.3%**, տրամադրված է երաշխավորություններով, ինչը զգալիորեն կրճատում է հաճախորդների համար վարկի ստացման ժամանակատարությունը և գրավադրման հետ կապված ծախսերը:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ. ևս, Բանկի վարկային պորտֆելում ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են հենց գյուղատնտեսական վարկերը՝ շուրջ **37%** մասնաբաժնով, որը կազմել է մոտ **62 մլրդ ՀՀ դրամ (128 մլն ԱՄՆ դոլար)**: Բանկը շարունակում է արդյունավետ համագործակցությունը ՀՀ Կառավարության հետ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում, որի արդյունքում 2016թ. նշված ծրագրի շրջանակներում հատկացված **15 մլրդ ՀՀ դրամ** ամբողջությամբ տեղաբաշխվել է մեր Բանկի կողմից:

Գյուղատնտեսական վարկային պորտֆելի 25%-ը հանդիսանում են սուբսիդավորվող վարկեր

## Գյուղատնտեսական վարկային դորսֆելի դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)




● Գյուղատնտեսական վարկերի ծավալ

# «ԱԳԲԱ ԼԻԳԻՆԳ» ՓԲԸ

Պատրաստակամ լինելով դիմակայել շուկայի մարտահրավերներին՝ ԱԳԲԱ Լիգինգը 2016թ. ընթացքում շարունակել է իր կողմից որդեգրված հաճախորդամետ քաղաքականությունը և իրականացրել մի շարք ծրագրեր: Հաշվետու ժամանակաշրջանում Շնկերությունը ներգրավել է ֆինանսական ռեսուրսներ Գերմանահայկական հիմնադրամից (KfW), ՎՋԵԲ-ից և Համահայկական բանկից, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել շուկայում առաջարկել նոր լիգինգային պրոդուկտներ՝ ավելի մրցունակ պայմաններով: Արդյունքում տարեվերջին ԱԳԲԱ Լիգինգի պորտֆելը կազմել է շուրջ **9.9 մլրդ ՀՀ դրամ (20 մլն ԱՄՆ դոլար)**:

## Լիգինգի պորտֆելի դինամիկան ըստ տարիների (մլրդ ՀՀ դրամ)



2016թ. ԱԳԲԱ Լիգինգը գրանցել է մի շարք ձեռքբերումներ.

Լիգինգի տեսակները համալրվել են նոր պրոդուկտներով՝ «Գրին Լիգինգ CashBack-ով», «Էքսպորտ Լիգինգ», «50% Կանխավճարով Լիգինգ» և «Էներգախնայող Լիգինգ»:

Կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր տեղական մատակարարների հետ, ինչպես նաև ավելացել է դիլերային համագործակցության պայմանագրերի քանակը՝ նպաստելով զարգացման նոր ուղիների բացահայտմանը:

## 2016թ. պորտֆելը ըստ լիգինգի առարկաների



- 1.4% ● Գյուղ. սարքավորումներ
- 13.4% ● Շին. և հանք. տեխնիկա
- 12.1% ● Մեքենաշինություն
- 0.4% ● Առևտրային սարքավորումներ
- 6.4% ● Բժշկական սարքավորումներ
- 0.2% ● Հանր. աշխատ. սարքավորումներ
- 0.5% ● Բնական գազի սարքավորումներ
- 5.5% ● Հիդրո էլեկտրո սարքավորումներ
- 0.5% ● Սառեցման և տաք. համակարգեր
- 0.8% ● Արևային ֆոտ. համակարգեր
- 3.2% ● ՏՏ և մեդիա սարքավորումներ
- 3.1% ● Տպագրական սարքավորումներ
- 3.8% ● Այլ սարքավորումներ
- 1.2% ● Անշարժ գույք
- 7.9% ● Ավտոբուսներ
- 8.5% ● Բեռնատար մեքենաներ
- 9.2% ● Սպառողական մեքենաներ
- 21.9% ● Բիզնես մեքենաներ



«Գրին Լիգինգ» ենթաբրենդը 2016թ. սեպտեմբերին պաշտոնապես գրանցվել է որպես ԱԳԲԱ Լիգինգի մտավոր սեփականություն:


Լիգինգի պորտֆելում «գրին» մասնաբաժինը 2016թ. տարեվերջին կազմել է 2.7 մլրդ ՀՀ դրամ



Լիգինգի պրոդուկտների վերաբերյալ իրագրվածության մակարդակի բարձրացման նպատակով Բանկի մասնաճյուղերի համար մշակվել և իրականացվել է ուսուցողական ծրագիր, որի շրջանակներում ստեղծվել է նաև «ԱԳԲԱ Լիգինգի պրոդուկտ քարտեր» համառոտ ձեռնարկը:

Բանկի մասնաճյուղերի միջոցով մատուցված լիգինգի պրոդուկտների մասնաբաժինը կազմել է 41%:

## 2016թ. լիգինգի պորտֆելը ըստ մարզերի և երևանի մասնաճյուղերի




- 59.4% ● ԱԳԲԱ Լիգինգի գրասենյակ
- 21.3% ● Երևան
- 3.0% ● Կոտայք
- 0.5% ● Տավուշ
- 1.0% ● Գեղարքունիք
- 1.0% ● Սյունիք
- 4.4% ● Շիրակ
- 0.3% ● Լոռի
- 2.5% ● Արագածոտն
- 1.5% ● Արմավիր
- 0.2% ● Վայոց Ձոր
- 5.5% ● Արարատ



ԱԳԲԱ Լիգինգը՝ հանդիսանալով ոլորտի առաջատար 77% մասնաբաժնով և ունենալով տարիների փորձ, 2016թ. ևս շարունակել է իր աջակցությունը ցուցաբերել ՀՀ օրենսդրական դաշտում լիգինգի վերաբերյալ կարգավորումների հարցում՝ համագործակցելով ՓՄՁ աջակցման գրասենյակի հետ:

## 2016թ. «ԱԳԲԱ Լիգինգ» ՓԲԸ մասնաբաժինը լիգինգի շուկայում



**77%**  
«ԱԳԲԱ Լիգինգ» ՓԲԸ  
**23%**  
Բանկեր և ՈՒԿԿ-ներ



Ernst & Young CJSC  
1 Northern Ave., office 27  
Yerevan, 0001, Armenia  
Tel: +374 (10) 500 790  
+374 (10) 500 705  
Fax: +374 (10) 500 706  
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0001  
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27  
Հեռ. +374 (10) 500 790  
+374 (10) 500 705  
Ֆաքս. +374 (10) 500 706



## Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություն

### Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետերերին և Խորհրդին

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության (միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խումբի ֆինանսական վիճակը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՅՄՍ-ների):

#### Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պարտականությունները նկարագրված են ստորև «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խումբից՝ համաձայն Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի Պրոֆեսիոնալ Հաշվապահների Վարքագրի (ՀՎՄՍի Վարքագիրը), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները համաձայն ՀՎՄՍի Վարքագրի: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Այլ հանգամանքներ

Խմբի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը չձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2016 թ. ապրիլի 26-ին:

## Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՅՄՍ-ների համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպությանը գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կառող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտությունն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- ▶ Հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ խմբի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- ▶ Գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան տեղեկատվության բացահայտման խելամուտությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել խմբի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն դարձնել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ▶ Ձեռք ենք բերում համապատասխան աուդիտորական ապացույցներ խմբի ընկերությունների ֆինանսական տեղեկատվության և ձեռնարկատիրական գործունեությունների վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի հանձնարարման, վերահսկման և իրականացման համար: Մենք միանձնյա պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, Խորհրդին տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող կարևոր թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝



Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Յ. Սարգսյան՝  
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի  
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

10 ապրիլի, 2017թ.

**Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն**

**2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

(հազար ՀՀ դրամ)

	2016թ.	2015թ.
<b>Ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	55,575,863	54,169,788
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	24,974	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	8,092,078	1,183,304
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
- Խմբի կողմից պահվող	26,275,179	17,350,075
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	-	2,638,083
Հաճախորդներին տրված վարկեր	165,222,046	168,358,966
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	9,760,982	9,607,216
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	263,639	243,032
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	15,328,248	15,278,358
Ընթացիկ հարկային ակտիվներ	234,387	1,504,741
Այլ ակտիվներ	2,494,447	2,519,675
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>283,271,843</b>	<b>272,853,238</b>
<b>Պարտավորություններ</b>		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	1,891	51,658
Բանկերի ավանդներ և մնացորդներ	34,543	23,339
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	-	2,500,627
Հաճախորդներին ընթացիկ հաշիվներ և ավանդներ	122,572,134	107,606,091
Այլ փոխառություններ	100,144,291	105,504,099
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	54,596	-
Հետաձգված պարտավորություններ շահութահարկի գծով	798,954	931,511
Այլ պարտավորություններ	3,070,339	2,523,785
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>226,676,748</b>	<b>219,141,110</b>
<b>Կապիտալ</b>		
Բաժնետիրական կապիտալ	30,000,000	30,000,000
Հողի և շենքերի վերագնահատումից աճ	2,990,119	2,990,119
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	1,487,492	427,278
Զբաղյալ շահույթ	20,501,757	18,816,669
<b>Բանկի բաժնետերերին վերագրելի ընդամենը կապիտալ</b>	<b>54,979,368</b>	<b>52,234,066</b>
Զվերահսկվող բաժնեմաս	1,615,727	1,478,062
<b>Ընդամենը կապիտալ</b>	<b>56,595,095</b>	<b>53,712,128</b>
<b>Ընդամենը կապիտալ և պարտավորություններ</b>	<b>283,271,843</b>	<b>272,853,238</b>

**Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝**

Հակոբ Անդրեասյան  
Արմեն Հակոբյան  
10 ապրիլի, 2017



Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	31,617,621	32,226,144
Տոկոսային ծախս	(13,943,736)	(15,192,877)
<b>Չուտ տոկոսային եկամուտ</b>	<b>17,673,885</b>	<b>17,033,267</b>
Վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստի ձևավորման գծով ծախս	(6,691,765)	(8,606,816)
<b>Չուտ տոկոսային եկամուտ վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների արժեզրկման պահուստից հետո</b>	<b>10,982,120</b>	<b>8,426,451</b>
Միջնորդավճարների գծով եկամուտ	3,247,973	3,265,417
Միջնորդավճարների գծով ծախս	(1,640,339)	(1,252,189)
Չուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	236,009	3,756
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	967,032	1,487,471
Չուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	70,260	38,634
Անցհացված կազմակերպությունների վնասի բաժնեմաս	(8,604)	(41,749)
Այլ եկամուտ	3,128,215	2,168,927
<b>Ոչ տոկոսային եկամուտ</b>	<b>6,000,546</b>	<b>5,670,267</b>
Անձնակազմի գծով ծախսեր	(8,097,518)	(6,780,965)
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,523,791)	(1,628,178)
Հողի և շենքերի վերագնահատումից կորուստներ	-	(590,338)
Այլ գործառնական ծախսեր	(1,064,056)	(1,473,567)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,976,237)	(3,234,716)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր	(544,232)	(31,209)
<b>Ոչ տոկոսային ծախսեր</b>	<b>(14,205,834)</b>	<b>(13,738,973)</b>
<b>Շահույթ մինչև շահութահարկ</b>	<b>2,776,832</b>	<b>357,745</b>
Շահութահարկի գծով ծախս	(954,079)	(397,766)
<b>Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)</b>	<b>1,822,753</b>	<b>(40,021)</b>
<b>Վերագրելի՝</b>		
- Բանկի բաժնետերերին	1,685,088	(41,689)
- Զվերահսկվող բաժնեմասին	137,665	1,668
<b>1,822,753</b>	<b>(40,021)</b>	

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
<b>Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)</b>	<b>1,822,753</b>	<b>(40,021)</b>
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից չիրացված օգուտ/(վնաս)	1,359,013	(158,068)
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի հետ կապված գործառնություններից իրացված օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում Շահութահարկի ազդեցություն	(70,260) (257,751)	(38,634) 39,341
<b>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>	<b>1,031,002</b>	<b>(157,361)</b>
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		
Շենքերի վերագնահատում	-	(399,091)
Շահութահարկի ազդեցություն	-	79,818
<b>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>	<b>-</b>	<b>(319,273)</b>
<i>Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքների բաժնեմաս՝</i>		
Որոշակի պայմաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող Շահութահարկի ազդեցություն	36,515 (7,303)	9,778 (1,956)
<b>Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքների բաժնեմաս</b>	<b>29,212</b>	<b>7,822</b>
<b>Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս) հարկումից հետո</b>	<b>1,060,214</b>	<b>(468,812)</b>
<b>Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)</b>	<b>2,882,967</b>	<b>(508,833)</b>
<b>Վերագրելի՝</b>		
- Բանկի բաժնետերերին	2,745,302	(510,501)
- Չվերահսկվող բաժնեմասին	137,665	1,668
	<b>2,882,967</b>	<b>(508,833)</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2016թ. հազ. դրամ	2015թ. հազ. դրամ
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		
Ստացված տոկոսներ	31,815,260	31,914,355
Վճարված տոկոսներ	(13,897,053)	(15,596,891)
Ստացված միջնորդավճարներ	3,247,973	3,265,417
Վճարված միջնորդավճարներ	(1,640,339)	(1,252,189)
Չուտ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	236,009	42,390
Չուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից	1,285,755	1,336,147
Վճարված այլ գործառնական ծախսեր	(1,011,998)	(866,023)
Ստացված այլ եկամուտ	2,812,094	720,364
Աշխատակազմին վճարված գումարներ	(8,009,897)	(6,710,645)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,976,237)	(2,368,696)
<b>Դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</b>	<b>11,861,567</b>	<b>10,484,229</b>
<i>Գործառնական ակտիվների զուտ (ավելացում/նվազում</i>		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(24,990)	200,961
Պահանջներ բանկերի նկատմամբ	(5,975,819)	11,575,646
Հաճախորդներին տրված վարկեր	(4,408,337)	263,451
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	(289,977)	(1,069,946)
Այլ ակտիվներ	(446,270)	55,613
<i>Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/նվազում</i>		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(49,768)	-
Բանկերի ավանդներ և մնացորդներ	10,792	15,811
Չետզման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	(2,500,000)	(4,507,028)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	14,220,220	8,292,065
Այլ պարտավորություններ	318,891	449,946
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>12,716,309</b>	<b>25,760,748</b>
Վճարված շահութահարկ	(13,159)	(354,552)
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից</b>	<b>12,703,150</b>	<b>25,406,196</b>
<b>Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,581,305)	(1,578,736)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից հոսքեր	3,480	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(15,239,768)	(12,480,637)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վաճառք և մարում	10,267,008	1,699,099
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում</b>	<b>(6,550,585)</b>	<b>(12,360,274)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>		
Այլ փոխառությունների ներգրավումից հոսքեր	43,219,228	22,556,064
Այլ փոխառությունների մարումներ	(47,939,182)	(45,886,159)
Վճարված շահաբաժիններ	-	(71,910)
<b>Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ֆինանսավորման գործունեությունում</b>	<b>(4,719,954)</b>	<b>(23,402,005)</b>
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(26,536)	(43,181)
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)</b>	<b>1,406,075</b>	<b>(10,399,264)</b>
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին</b>	<b>54,169,788</b>	<b>64,569,052</b>
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին</b>	<b>55,575,863</b>	<b>54,169,788</b>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն  
2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

**ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ**

	Բաժնետիրական կապիտալ	Հողի և շենքերի վերագնահատումից աճ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Զվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը կապիտալ
<b>2015թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>30,000,000</b>	<b>3,888,683</b>	<b>576,817</b>	<b>18,279,067</b>	<b>52,744,567</b>	<b>1,548,304</b>	<b>54,292,871</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>							
Հաշվետու տարվա վնաս	-	-	-	(41,689)	(41,689)	1,668	(40,021)
Այլ համապարփակ վնաս	-	(319,273)	(149,539)	-	(468,812)	-	(468,812)
<b>Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս</b>	<b>-</b>	<b>(319,273)</b>	<b>(149,539)</b>	<b>(41,689)</b>	<b>(510,501)</b>	<b>1,668</b>	<b>(508,833)</b>
<b>Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում</b>							
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	-	-	(71,910)	(71,910)
<b>Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(71,910)</b>	<b>(71,910)</b>
Տեղափոխություն վերագնահատումից աճից չբաղիված շահույթ	-	(579,291)	-	579,291	-	-	-
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>30,000,000</b>	<b>2,990,119</b>	<b>427,278</b>	<b>18,816,669</b>	<b>52,234,066</b>	<b>1,478,062</b>	<b>53,712,128</b>
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>							
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	1,685,088	1,685,088	137,665	1,822,753
Այլ համապարփակ եկամուտ	-	-	1,060,214	-	1,060,214	-	1,060,214
<b>Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,060,214</b>	<b>1,685,088</b>	<b>2,745,302</b>	<b>137,665</b>	<b>2,882,967</b>
<b>2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>30,000,000</b>	<b>2,990,119</b>	<b>1,487,492</b>	<b>20,501,757</b>	<b>54,979,368</b>	<b>1,615,727</b>	<b>56,595,095</b>

(հազար ՀՀ դրամ)

## Ծանոթագրություն 1

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են հմբի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական համախմբված ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունները, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային կայքում:



օօօ2, ք. Երևան, Արամի 82-84, / 82-84 Aram Street, Yerevan, օօօ2  
(+ 374 10) 31 88 88, / [acba.am](http://acba.am)